ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2024 թվականի N _____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, 64–րդ հոդվածի 5-րդ մասը, 698-րդ հոդվածի 3-րդ մասը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» ենթակետն ու 24-րդ հոդվածի 1-ին մասը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածները՝ Կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) վերակազմավորման ձևովվերակազմակերպել 100 տոկոս պետական մասնակցությամբ «Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն):
2. Սահմանել, որ՝

1) կազմակերպության իրավահաջորդն ընկերությունն է, և վերջինիս են անցնում վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են կազմակերպության միջոցների հաշվին:

3.Կազմակերպությանն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի 4-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 1/1 հասցեում գտնվող՝ 66113482.0 դրամ սկզբնական և 45023500.0 դրամ հաշվեկշռային արժեքով 177.05 քառ. մետր մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.1191 հեկտար հողամասն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27122016-10-0008 վկայական, տրված՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ին) ընկերությանն են հանձնվում անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով:

4. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը սահմանել 50.0 հազ. դրամ, որը բաժանված է 10 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսի՝ 5.0 հազ. դրամ անվանական արժեքով: Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

5. Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին:

6. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ ընկերության պետական գրանցման աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում Ընկերության հետ կնքել սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ Պայմանագրի նոտարական վավերացման և Պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման Ընկերության միջոցների հաշվին:

7. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում կազմակերպել՝

ա. վերակազմավորման կարգի և պայմանների, փոխանցման ակտի հաստատումը,

բ. ընկերության կանոնադրության հաստատումը, գործադիր մարմնի և վերստուգող հանձնաժողով (վերստուգող) ձևավորումը,

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում ապահովել՝

ա. ընկերության պետական գրանցումը,

բ. կազմակերպության գործունեության դադարեցման պետական գրանցումը:

8. Ընկերության խորհրդի ձևավորման հարցը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ **Ն. Փաշինյան**

2024թ.

Երևան